

## **ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅՅԵՐԻ ԴԱՍՍԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի կարևորագույն նվաճումներից մեկը Հայաստանում վարչական արդարադատության սկզբնավորումն էր: Հանրային իրավական հարաբերություններից բխող վեճերի քննության և լուծման համար ստեղծվեց մասնագիտացված վարչական դատարան, որն այդուհետ իր գործառույթներն իրականացնելու էր 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված և 2008 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված: Վերջին շուրջ 5 տարիների ընթացքում վարչական դատարանի գործունեությունը ցույց տվեց ինչպես այդ օրենսգրքի արդյունավետությունը, այնպես էլ օգնեց վերջինիս պրակտիկ կիրառման արդյունքում բացահայտել դրա թերի և անկատար կարգավորումները: Դա էլ, թերևս, հիմք հանդիսացավ Վարչական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) մշակման համար, որն ընդունվեց 2013 թվականի դեկտեմբերի 5-ին և ուժի մեջ մտավ 2014 թվականի հունվարի 7-ին:

Ինչպես նախկին, այնպես էլ գործող վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վարչական դատարանում գործի հարուցման մեկ հիմք՝ հայցը: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ հայցատեսակները չեն տարբերակվում, վարչական դատավարությունում նախատեսված է հայցի 4 տեսակ՝

1. վիճարկման
2. պարտավորեցման
3. գործողության կատարման
4. ճանաչման

Հայցատեսակների նման դասակարգման արդյունքում հայցի ներկայացման պահից դատարանի համար ակնհայտ է դառնում դրանցում ամրագրված պահանջի էությունը, ինչպես նաև այն հարցը, թե արդյոք հայցվորը ներկայացրել է հենց այն հայցատեսակը, որի միջոցով կարող է հասնել իր համար ցանկալի արդյունքի:

---

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ս. Գ. Մեղրյան:

Ներկայացված հայցատեսակներից յուրաքանչյուրն ունի իր առարկան, բովանդակությունը և ներկայացման ժամկետը, ինչպես նաև կանխորոշում է դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակը:

Վերոնշյալ հայցատեսակների բովանդակության բացահայտմանն են նվիրված Օրենսգրքի 66-68-րդ հոդվածները: Այսպես, 66-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Այս ձևակերպումից հետևում է, որ վիճարկման հայցի թույլատրելիության համար անհրաժեշտ է հետևյալ հանգամանքների առկայությունը՝

1. Պետք է առկա լինի հայցվորի համար միջամտող վարչական ակտ, ընդ որում, գուգորդվող վարչական ակտի՝ հայցվորի համար միջամտող դրույթները ևս կարող են վիճարկվել նշված հայցատեսակի շրջանակներում:

2. Հայցվորի պահանջը պետք է ուղղված լինի այդ վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն, այն է՝ անվավեր ճանաչելուն:

Վիճարկման հայցի շրջանակներում միջամտող վարչական ակտի անվավեր ճանաչման հիմքերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածում, համաձայն որի՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Վիճարկման հայցի քննության դեպքում դատարանը պարտադիր պետք է քննության առարկա դարձնի վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ինչը նշանակում է, որ դատարանը պետք է հնարավորություն ունենա անմիջականորեն այն հետազոտելու: Այդ հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, ՎԴ/1346/05/10 վարչական գործով վերջինս նշել է. «...*վիճարկման հայցի առարկան է միջամտող վարչական ակտն ամբողջությամբ*

կամ մասամբ վերացնելու կամ փոփոխելու պահանջը: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար, առանց վիճարկվող ակտի հետազոտման ոչ միայն անհնարին է ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջի կատարումը, այլև հայցի նյութական օբյեկտի՝ վիճարկվող վարչական ակտի բացակայությունն ընդհանրապես բացառում է այդ ակտի իրավաչափությունը գործում առկա ապացույցների միջոցով գնահատելու հնարավորությունը»: Ավելին, դատարանի կողմից վճռի կայացումն առանց գործում վիճարկվող վարչական ակտի առկայության որակվել էր որպես դատավարական նորմի խախտում՝ նշելով, որ ելնելով փաստերն ի պաշտոնե պարզելու վարչադատավարական սկզբունքից՝ վարչական դատարանն այդ սկզբունքի պահանջներին համապատասխան պարտավոր էր միջոցներ ձեռնարկել վիճարկվող ակտի առկայությունը գործում ապահովելու ուղղությամբ:

Նախկին վարչական դատավարության օրենսգրքի կարգավորման պայմաններում վիճարկման հայցի հետ կապված խնդիրներ էին առաջանում, եթե վիճարկվող վարչական ակտը մինչ այդ բողոքարկվել էր վարչական կարգով, և վարչական մարմինը մերժել էր բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ: Նման պայմաններում, եթե դատարանը բավարարում էր հայցը՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտը, այդ նույն մարմնի՝ վարչական բողոքի քննարկման արդյունքում կայացված վարչական ակտը, այնուամենայնիվ, մնում էր ուժի մեջ: Նման իրավիճակների կանխարգելման նպատակով գործող Օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվեց հետևյալ կարգավորումը՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ: Դա նշանակում է, որ անկախ այն հանգամանքից, հայցվորը ներկայացրել է նաև վարչական բողոքի արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վերացման պահանջ, թե ոչ, դատարանը պարտավոր է վիճարկման հայցի շրջանակներում անդրադառնալ նաև այդ հարցին:

Վիճարկման հայցի հետ սերտորեն կապված է ճանաչման հայցի՝ 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթատեսակը: Նշված հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Վիճարկման հայցի դեպքում հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել վարչական ակտը, մինչդեռ ճանաչման հայցով հայցվորի պահանջը վերաբերում է վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելուն: Վարչական ակտի առ ոչինչ լինելու հիմքերը ևս սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որի 62-րդ հոդվածի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ի՞նչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ առկա է առոչինչ լինելու որևէ հիմք, ապա հայցվորը չի կարող նույն վարչական ակտն այլ հիմքով վիճարկել՝ պահանջելով այն անվավեր ճանաչել, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, թվարկելով վարչական ակտի անվավերության հիմքերը, մի վերապահում է արել՝ սահմանելով, որ անվավեր կարող է լինել միայն առոչինչ չհանդիսացող վարչական ակտը:

Խիստ կարևոր է հայցվորի կողմից ճիշտ հայցատեսակ ներկայացնելը, քանի որ դատարանն իր նախաձեռնությամբ չի կարող անվավերության պահանջի ներկայացման դեպքում հայցը բավարարել՝ կիրառելով ոչ թե անվավերության, այլ առոչնչության հիմքեր: Այս հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, ՎԴ/2514/05/09 վարչական գործով վերջինս նշել է. «Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հստակ տարանջատում է վիճարկման և ճանաչման հայցերի տեսակները: Հետևաբար, այդ հայցերից որևէ մեկի ներկայացման դեպքում ՀՀ վարչական դատարանը

*պարտավոր է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը որոշել դրա շրջանակներում: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ ներկայացվում է վարչական ակտն առոչինչ ճանաչելու (ճանաչման հայց) վերաբերյալ հայցադիմում, ՀՀ վարչական դատարանն իրավասու է վճիռ կայացնել վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն առոչինչ լինելու մասին, կամ մերժել այդպիսի հայցադիմումը, և իրավասու չէ իր հայեցողությամբ փոփոխել հայցապահանջը՝ վարչական ակտը ճանաչելով անվավեր (վիճարկման հայց)»:*

Օրենսգրքով սահմանված հաջորդ հայցատեսակը պարտավորեցման հայցն է: Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Այս հայցատեսակի թույլատրելիության համար պարտադիր պայման է հայցվորի կողմից մինչև հայց ներկայացնելը վարչական մարմնին իր համար համապատասխան բարենպաստ վարչական ակտ ընդունելու պահանջով դիմած և մերժված լինելը: Ընդ որում, պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից հայցվորի պահանջը մերժող միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը: Տվյալ դեպքում գործ ունենք ոչ ինքնուրույն վիճարկման հայցի հետ, որի վերաբերյալ պարտադիր չէ, որ հայցվորը առանձին պահանջ ներկայացրած լինի:

Վարչական դատավարության նախկին օրենսգիրքը պարտավորեցման հայցի հասկացության մեջ ներառում էր այն դեպքերը, երբ անձը դիմել էր վարչական մարմնին իր համար բարենպաստ վարչական ակտ ընդունելու, և վարչական մարմնին այն չէր ընդունել: Սա, իհարկե, չի նույնանում վարչական ակտն ընդունելը մերժելու հետ, այս դեպքում խոսքն այն մասին է, որ վարչական մարմնին ընդհանրապես չի անդրադարձել անձի դիմումին, և որևէ գրավոր մերժում առկա չէ:

Նոր Օրենսգիրքն իրավացիորեն հրաժարվեց այդ կարգավորումից՝ այդ դեպքերը հանելով պարտավորեցման հայցի շրջանակներից: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը նախատեսում է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող

վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը<sup>2</sup>:

Նշված կարգավորումը ենթադրում է, որ նման դեպքերում վարչական ակտն օրենքի ուժով արդեն իսկ համարվում է ընդունված, և նման պայմաններում իրավամբ անհասկանալի էր վարչական մարմնի կողմից վարչական ակտ չընդունելու դեպքում նման պահանջով պարտավորեցման հայց ներկայացնելու հնարավորության իմաստը:

Պրակտիկայում հաճախ պարտավորեցման և գործողության կատարման հայցի տարբերակման խնդիր է առաջանում: Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Այս երկու հայցատեսակների հասկացությունների համադրման արդյունքում ակնհայտ է դառնում, թե որն է դրանց տարբերությունը: Գործողության կատարման հայցի դեպքում հայցվորի նպատակը ոչ թե վարչական ակտի ընդունումն է, այլ վարչական մարմնի կողմից որևէ գործողության կատարումը կամ դրանից ձեռնպահ մնալը:

Գործողության կատարման հայցի դեպքում միշտ պետք է ստուգել, թե արդյոք հայցվող գործողության կատարման համար նախապես անհրաժեշտ չէ վարչական ակտ ընդունել (օրինակ՝ որոշակի գումար վճարելու վերաբերյալ որոշման ընդունում): Եթե վարչական ակտի ընդունումն անհրաժեշտ է, ապա պետք է ներկայացնել ոչ թե գործողության կատարման, այլ պարտավորեցման հայց<sup>3</sup>:

Օրենսգրքով նախատեսված վերջին հայցատեսակը ճանաչման հայցն է, որն իր հերթին ունի 3 ենթատեսակ՝

1. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել Օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան (հոդված 69, մաս 1).

2. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը (հոդված 69, մաս 2).

---

<sup>2</sup> Իրավաբանական գրականության մեջ դա անվանվում է իրավական ֆիկցիա:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք: Ընդհ. խմբ. Վ.

Պողոսյան և Ռ. Ռուբել, Երևան, 2011, էջ 386-387:

3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Ճանաչման հայցի առաջին ենթատեսակի թույլատրելիության կարևորագույն նախապայմանը հայցի մյուս բոլոր տեսակների ներկայացման հնարավորության բացակայությունն է: Այս հայցատեսակի վերաբերյալ հետաքրքիր դիրքորոշումներ է արտահայտել Գերմանիայի դաշնային վարչական դատարանը: Այսպես, իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու վերաբերյալ հարցը թույլատրելի է այն դեպքում, երբ հանրային իրավունքի որևէ նորմի հիման վրա կոնկրետ փաստական իրավիճակից բխում է մեկ անձի իրավահարաբերության մեկ այլ անձի կամ առարկայի առնչությամբ և կողմերի միջև առկա է վեճ այն մասին, թե նրանցից ով ինչ իրավունքներ կամ պարտականություններ ունի<sup>4</sup>: Խոսքը վերաբերում է կոնկրետ իրավական հարցերին, նման դեպքերում հայցվորը ցանկանում է դատարանից ստանալ իր և վարչական մարմնի միջև վիճելի իրավական հարցի պատասխանը: Նման իրավիճակ է, օրինակ, այն դեպքը, երբ քաղաքացու և վարչական մարմնի համար վիճահարույց են առանձին իրավունքներ և պարտականություններ, որոնք բխում են իրավունքի նորմերից<sup>5</sup>:

Ճանաչման հայցերից թերևս ամենաառանձնահատուկը վերոնշյալ երրորդ ենթատեսակն է: Վերջինս մի կարևոր հատկանիշ ունի, որով տարբերվում է ոչ միայն ճանաչման հայցի, այլև ընդհանրապես հայցի մյուս բոլոր տեսակներից: Այդ տարբերակիչ հատկանիշը

---

<sup>4</sup> BVerwGE 100, 262, 264:

<sup>5</sup> Deterbeck, Allgemeines Verwaltungsrecht mit Verwaltungsprozessrecht, կետ 1395:

վերջինիս օբյեկտը հասցեատիրոջ համար այլևս իրավաբանական ուժ չունեցող (սպառված) վարչական ակտերը և գործողություններն ու անգործությունն են: Նման դեպքերում վիճարկման կամ գործողության կատարման հայց ներկայացնելն անթույլատրելի է, քանի որ առկա չէ վիճարկման ենթակա վարչական ակտը կամ գործողությունը: Միննույն ժամանակ, հնարավոր են դեպքեր, որ հայցվորը շահագրգռված լինի դրանց ոչ իրավաչափ ճանաչման մեջ: Հենց դա հաշվի առնելով՝ օրենսդիրը նախատեսել է 3 նախադրյալ, որոնց առկայության դեպքում հայցվորն իրավունք է ձեռք բերում ներկայացնելու անգամ սպառված վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ:

Օրենսդիրը վարչական ակտերի դեպքում օգտագործում է այլևս իրավաբանական ուժ չունեցող տերմինը, իսկ գործողության կամ անգործության դեպքում կատարմամբ կամ այլ կերպ իրեն սպառած տերմինը, դրանց բովանդակությունը, ըստ էության, նույնն է<sup>6</sup>: Այս ձևակերպումից հետևում է, որ կատարում և սպառում տերմինները չեն նույնանում: Վարչական ակտը կարող է կատարված լինել, բայց դա դեռևս չի նշանակում, որ այն իրեն սպառել է: Այդ հասկացությունների տարբերակման հիմքում ընկած է այն, թե արդյոք տվյալ վարչական ակտը դեռևս կարող է վերացվել, թե ոչ, այսինքն՝ արդյոք շարունակվում է այդ ակտի միջամտությունը քաղաքացիների իրավունքներին: Օրինակ՝ եթե անձը վճարել է ճանապարհային ոստիկանության վարչական ակտով իր նկատմամբ նշանակված տուգանքը, այդ վարչական ակտը կատարվել է, սակայն դեռևս չի սպառել իրեն: Այս դեպքում անձը դեռևս կարող է այն վիճարկել՝ պահանջելով վերացնել այն ամբողջությամբ կամ մասամբ, և արդյունքում հետ ստանալ իր կողմից արդեն վճարված գումարը: Մինչդեռ, օրինակ, ցույցի ցրումը, որը բանավոր վարչական ակտ է, կատարվելու դեպքում սպառվում է, կորցնում է իր իրավաբանական ուժը, քանի որ դրա իրավական ներգործությունը դադարում է: Վարչական ակտը սպառվում է նաև, եթե լրացել է իր գործողության ժամկետը կամ վարչական մարմինը վերացրել է այն: Այսպիսով, վարչական ակտի, գործողության կամ անգործության կատարումը սպառման եղանակ է, սակայն ոչ միշտ է, որ այն հանգեցնում է դրանց սպառման:

---

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք: Ընդհ. խմբ. Վ. Պողոսյան և Ռ. Ռուբել, Երևան, 2011, էջ 390:



Քննարկված յուրաքանչյուր հայցատեսակի համար Օրենսգիրքը սահմանում է հայցի ներկայացման հատուկ ժամկետներ: Այսպես՝ Օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է հետևյալ ժամկետները՝

1. վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից.

2. պարտավորեցման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահից.

3. գործողության կատարման հայցի դեպքում՝

ա. մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահից,

բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը,

գ. եռամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, եթե առկա չեն սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը.

4. ճանաչման հայցի դեպքում՝

ա. անկախ ժամկետից՝ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում նշված գործերով,

բ. 5 տարվա ընթացքում՝ վարչական ակտն ուժը կորցնելու, գործողության կամ անգործության սպառվելու պահից՝ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով,

գ. 5 տարվա ընթացքում՝ իրավահարաբերության ծագման կամ դադարման պահից՝ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործերով:

Հայցատեսակների վերլուծությունից բխում է, որ Օրենսգրքով նախատեսված գրեթե բոլոր հայցատեսակների դեպքում հայցվոր կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձը, իսկ պատասխանող՝ վարչական մարմինը, քանի որ բոլոր հայցերով պահանջներն ուղղված են կամ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտի վիճարկմանը (անվավեր, առաջինչ կամ ոչ իրավաչափ ճանաչմանը), կամ վարչական մարմնին վարչական ակտի ընդունման, որոշակի գործողության կատարման կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցմանը: Թերևս միայն ճանաչման հայցի առաջին ենթատեսակի՝ որոշակի իրավահարաբերության առկայության կամ բացակայության ճանաչման պահանջի դեպքում է հնարավոր, որ հայցվորի դերում հանդես գա նաև վարչական մարմին-

նը: Այս բոլոր դեպքերում հայցվորը սահմանափակված է որոշակի ժամկետներով:

Օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է, թե ովքե՞ր, ո՞ր դեպքե-  
րում և ո՞ւմ դեմ կարող են դիմել վարչական դատարան: Նշված հոդ-  
վածի 2-րդ մասով նման իրավունք է տրված նաև վարչական մարմին-  
ների կամ պաշտոնատար անձանց հետևյալ դեպքերում՝

1. ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պա-  
տասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախա-  
տեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթար-  
կել միայն դատարանը.

2. ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրա-  
վունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություն-  
ներ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարա-  
նին.

3. ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերա-  
բերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության  
կարգով:

Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ Օրենսգիրքը մի  
կողմից իրավունք է տվել վարչական մարմիններին ու պաշտոնա-  
տար անձանց դիմելու վարչական դատարան, որոշակի անձի վրա  
որևէ պարտականություն դնելու պահանջով կամ նույնիսկ ընդդեմ  
մեկ այլ վարչական մարմնի, եթե առկա է իրավասության վերաբերյալ  
վեճ, իսկ մյուս կողմից չի նախատեսել նրանց այդ իրավունքի իրաց-  
ման համար համապատասխան հայցատեսակ: Նշված պահանջները  
չեն տեղավորվում Օրենսգրքով նախատեսված ոչ մի հայցատեսակի  
շրջանակներում: Պրակտիկայում դատարաններն ընդունում են նման  
հայցերը և քննում դրանք՝ հիմնվելով Օրենսգրքի 3-րդ հոդվածով այդ  
անձանց համար սահմանված իրավունքի վրա: Հաշվի առնելով այն,  
որ նման դեպքերում առկա չէ որևէ հայցատեսակ, նման հայցերի հա-  
մար, ըստ էության, սահմանված չեն նաև հայցի ներկայացման ժամ-  
կետներ: Արդյունքում անհավասար իրավիճակ է ստեղծվում ֆիզի-  
կական ու իրավաբանական անձանց և վարչական մարմինների ու  
պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցատեսակների  
միջև, քանի որ վերջիններիս դեպքում որևէ սահմանափակում ժամ-  
կետային և բովանդակային առումով առկա չէ:

Վարչական հայցերի դասակարգումը ոչ բոլոր երկրներին է հատուկ: Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում հայցի առանձին տեսակներ, այլ սահմանում է, որ հանրային իրավական հարաբերություններից բխող վեճերի դեպքում ներկայացվում է ընդհանուր հայց վեցամսյա ժամկետում սկսած այն օրվանից, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին<sup>7</sup>:

Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի նախագիծը<sup>8</sup> ևս հայցի տեսակներ չի նախատեսում, այլ թվարկում է, թե ինչպիսի պահանջներ կարող են ներկայացվել վարչական հայցի շրջանակներում, ընդ որում, այդ պահանջների ցանկը սպառիչ չէ: Այսպես՝ նախագծի 126-րդ հոդվածի համաձայն՝ վարչական հայցը կարող է պարունակել հետևյալ պահանջները՝

1. պատասխանողի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակի չգործող ճանաչելու վերաբերյալ:

2. պատասխանողի կողմից ընդունված որոշումը կամ կատարված գործողությունը (անգործությունը) ամբողջությամբ կամ մասնակի անօրինական ճանաչելու վերաբերյալ:

3. պատասխանողին որոշակի հարցի վերաբերյալ որոշում ընդունելուն կամ հայցվորի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի խախտումների վերացմանն ուղղված գործողություններ կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ:

4. պատասխանողին որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու վերաբերյալ:

5. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դաշնային օրենքով պետական կամ այլ հանրային լիազորություններով օժտված այլ մարմինների, պաշտոնատար անձանց մոտ որոշակի հարցի լուծման լիազորությունների առկայության կամ բացակայության հաստատման վերաբերյալ:

Նույն հոդվածը սահմանում է նաև, որ վարչական հայցով կարող են ներկայացվել հանրային իրավահարաբերությունների ոլորտում ի-

---

<sup>7</sup> **Константы́й А.**, Сравнительно-правовой анализ видов исков в административном судопроизводстве Украины и зарубежных государств, журнал *Legea Si Viata*, сентябрь 2014, цд. 61-64. <http://www.legeasiviata.in.ua/archive/2014/9-2/17.pdf>

<sup>8</sup> Ընդունվել է առաջին ընթերցմամբ ՌԴ Պետական դումայի կողմից:

րավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված այլ պահանջներ:

Վրաստանի վարչական դատավարության օրենսգիրքը հայցերի դասակարգման տեսանկյունից մոտ է Հայաստանի Օրենսգրքին: Նախատեսված են հայցի նույն 4 տեսակները, սակայն կան որոշակի տարբերություններ: Սկզբնապես վիճարկման հայցի շրջանակներում կարող էր ներկայացվել ինչպես վարչական ակտի անվավերության, այնպես էլ առոչինչ ճանաչելու պահանջ: 2005 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում վարչական ակտն առոչինչ ճանաչելու պահանջը կարող է ներկայացվել ճանաչման հայցի շրջանակներում, իսկ վիճարկման հայցի առարկան կարող է լինել ոչ միայն վարչական ակտի անվավերության, այլ նաև այն ուժը կորցրած ճանաչելու պահանջը<sup>9</sup>: Ճանաչման հայցն ունի ևս մեկ ենթատեսակ, այն է՝ որոշակի իրավունքի կամ իրավահարաբերության առկայության կամ բացակայության ճանաչման պահանջը, ընդ որում պետք է առկա լինի հայցվորի արդարացի շահը: Այս հայցատեսակը, ինչպես և Հայաստանում, չի կարող ներկայացվել, եթե հնարավորություն կա ներկայացնելու վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց:

Գերմանիայի վարչական դատավարության օրենսգիրքը ևս հայցի մի քանի տեսակներ է սահմանում, ընդ որում, որպես այդպիսին, օրենսգրքի 42-րդ և 43-րդ հոդվածները նախատեսում են 3 հայցատեսակ, սակայն օրենսգրքի մի շարք այլ դրույթներից ակնհայտ է դառնում և պրակտիկայում էլ այդպես է ընկալվում, որ իրականում գոյություն ունեն ևս մի քանի հայցատեսակ<sup>10</sup>: Օրենսգրքով հստակ նախատեսված են վիճարկման, պարտավորեցման և ճանաչման հայցերը: Վիճարկման հայցի առարկան վարչական ակտը վերացնելու պահանջն է, պարտավորեցման հայցի առարկան՝ վարչական մարմնին վարչական ակտ (որի ընդունումը մերժվել է կամ որը վարչական մարմինը չի ընդունել) ընդունելուն պարտավորեցնելու պահանջն է, իսկ ճանաչման հայցի առարկան՝ իրավահարաբերության առկայության կամ բացակայության, ինչպես նաև վարչական ակտն առո-

---

<sup>9</sup> **Чантурия Л.**, Система и компетенция административных судов в Грузии. <http://refdb.ru/look/2552342.html>

<sup>10</sup> **Loll D. und Schutt H.**, Das öffentliche Recht und Wirtschaftswissenschaftler. Ein klausurorientiertes Lehrbuch, 2004, էջ 48-50.

չինչ ճանաչելու պահանջն է: Օրենսգրքի մի շարք այլ հոդվածներից բխում է նաև հետևյալ հայցատեսակների գոյությունը՝ գործողության կատարման հայց, ինչպես նաև վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու հայց:

Այսպիսով, վարչական հայցերի դասակարգման հարցում տարբեր երկրներում տարբեր մոտեցումներ են առկա, և թերևս դրանցից յուրաքանչյուրն էլ ունի իր թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Հայցերի դասակարգումն անհրաժեշտ է՝ հաշվի առնելով իրավահարաբերությունների բազմազանությունը և ինքնատիպությունը, ինչից ելնելով էլ Օրենսգիրքը սահմանել է իրավահարաբերությունների որոշակի խմբերի համար հատուկ կարգավորումներ՝ կապված պահանջի ձևակերպման, հայցի ներկայացման ժամկետների, ապացուցման բեռի բաշխման հետ: Միաժամանակ, հայցի տեսակները սահմանելիս հաշվի չի առնվել բոլոր հնարավոր պահանջների ու իրավահարաբերությունների ծավալը, որոնք բխում են վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց և նրանց կողմից վարչական դատարան դիմելու պահանջների շրջանակից:

**Ани Чилингарян**

*Аспирант кафедры гражданского процесса ЕГУ*

## **ПРОБЛЕМЫ КЛАССИФИКАЦИИ АДМИНИСТРАТИВНЫХ ИСКОВ**

В статье обсуждается классификация административных исков, установленная в Административно-процессуальном кодексе Республики Армения. И предыдущий, и действующий Административно-процессуальный Кодекс предписывает 4 вида административных исков, каждый из которых имеет свои предметы, специальные сроки для предъявления иска.

Целью статьи является изучение правового регулирования видов иска и нескольких решений Кассационного Суда, для того, чтобы иметь лучшее представление о данном вопросе и выявить возможные пробелы действующего регулирования. Автор также обсуждает регулирование в нескольких других странах, в частности, в Германии, Грузии, Украине и России. Поскольку Германия была примером для Армении во время разработки Административно-процессуального

Кодекса и принимая во внимание опыт и судебную практику в Германии, автор изучает также позиции и мнения представленные в судебных решениях и в правовой доктрине.

**Ani Chilingaryan**

*PhD student of the YSU Chair of Civil Procedure*

## PROBLEMS OF THE CLASSIFICATION OF ADMINISTRATIVE ACTIONS

The article discusses the classification of administrative actions stipulated in RA Administrative Procedure Code. Both the former and present Administrative Procedure Code stipulate 4 types of administrative actions, each of which have their own subject, specific terms for presenting the action.

This article aims to study the legal regulation of the types of actions and to present several decisions of RA Cassation Court to have a better understanding on the issue and to try to find out possible shortcomings of existing regulations. The author also discusses the regulation in several other countries, particularly, Germany, Ukraine, Georgia and Russia. Considering that Germany has served as an example for Armenia while drafting Administrative Procedure Code and the huge experience and judicial practice already existing in Germany, the author has studied also the positions and opinions expressed in judicial decisions and legal doctrine.

*Բանալի բառեր՝ վիճարկման հայց, պարտավորեցման հայց, գործողության կատարման հայց, ճանաչման հայց, վարչական ակտ, ոչ իրավաչափ ճանաչել, այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտ, սպառված գործողություն կամ անգործություն:*

**Ключевые слова:** *иск об оспаривании, иск о принуждении, иск о выполнении действия, иск о признании, административный акт, признать неправомерным, административный акт не имеющий юридическую силу, исчерпанное действие или бездействие.*

**Key words:** *rescissory action, obligatory action, action for the performance of a certain action, action for recognition, administrative act, to recognize unlawful, administrative act with no legal force, exhausted action or inaction.*